«ԶՐՈՑՍԻ ՐՈՑՈՑ ՐԵԶ ՄԷՏՈՒՑԷՆԵՄՐ»

(ԽՈՐԵՆ Ա ՄՈՒՐԱԴԲԵԿՅԱՆ ՆԱՀԱՏԱԿ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՃՅՈՒՆՆ ԱՄՓՈՓՎԵՑ ՄԱՅՐԱՎԱՆՔԻ ԲԱԿՈՒՄ)

Մի այլ խորհուրդ ուներ սույն թվականի սեպտեմբերի 7-ի այգաբացը: Առավոտյան, ժամը 9-ին, մեծաթիվ հավատացյալ հայրդիներ էին եկել մասնակցելու Ս. Գայանե վանքում մատուցվող Սուրբ և անմահ Պատարագին: Օրվա պատարագիչն էր հոգեշնորհ Տ. Հայկազուն ծայրագույն վարդապետ Նաջարյանը:

Հավատացյալ ժողովուրդը եկել էր նաև իր հարգանքի ու սիրո տուրքը մատուցելու Ամենայն Հայոց բազմաչարչար Հայրապետին՝ երջանկահիշատակ Խորեն Ա Մուրադբեկյանին, խոնարհվելու նրա անմահ հիշատակի առջև, ում աճյունը Սուրբ Գայանեից տեղափոխվելու էր Մայր Աթոռ և արժանիորեն հանգչելու էր Մայրավանքի բակում՝ մյուս Կաթողիկոսների շիրիմների կողքին:

Հավարտ մատուցվող Սուրբ և անմահ Պատարագի, Ս. Գայանեում կատարվեց հոգեհանգստյան արարողություն:

Այնուհետև սգո թափորը, որի մաս էին կազմում Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս

Մանուկյանը, թեմական առաջնորդները. Մայր Աթոռին միաբանները, արժանապատիվ տեր հայրեր, նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետի, հատուկ աղոթասացությամբ և երգեցողությամբ, Մայրավանքի պանգերի զողանջների ներքո, ուղղվեց դեպի Մայր Աթոռ, ուր նս ներկա էր հավատացյալների հոծ բազմություն:

Թաղման արարողակարգին ներկա էին նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի նախագահ տիար Գագիկ Հարությունյանը, Սկզային Ժողովի փոխնախագահ Կարապետ Ռուբինյանը, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, դիվանագետ այրեր, բարձրաստիճան հյուրեր:

Երանաշնորհ Հայրապետի աճյունի մասունքներն ամփոփող մասնատուփը նախ դրվեց Մայր Տաճարում, Իջման Սուրբ Սեղանի առջև, ուր դարձյալ կատարվեց հոգեհանգիստ: Այնուհետև Մայր Տաճարի բակում տեղի ունեցավ հուղարկավորման կարգը: Սկզանվեր Կաթողիկոսի աճյունը դամբարանում պետեղելուց հետո, հիշատակի և գնահատանքի խոսք ասաց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետը: Դիմելով ներկա հավատավորներին, Նորին Սրբությունն ասաց. «...Այսօր չենք եկել սգալու, ողբալու, լալու, այսօր եկել ենք փառաբանելու, պանծացնելու և առ Աստված գոհություն ընծայելու, որ տառապագին օրերին այսպիսի մարդ տվավ մեր ժողովրդին, որ գիտցավ ջահը վառ պահել, և նույնիսկ իր մահից հետո այդ ջահը ճաճանչում է մեր բոլորի կյանքում»:

Նշելով պահի կարևորությունը, Հայոց Հայրապետն ընդգծեց, որ Խորեն Ա Կաթողիկոսը պատմություն դարձավ ոչ միայն իր նահատակությամբ, այլև անգնահատելի գործունեությամբ. «Խորեն Ա անմոռանալի և անմահանուն Կաթողիկոսը պետք չէ սակայն մնա պատմությանը մեջ հիշատակելի և պանծալի միայն իր նահատակության արարքովը: Երբ կարդաք նրա կյանքը, երբ կարդաք նրա գրությունները, կկգաք, որ նա մեծ կաթողիկոս մըն էր ոչ թե մահով, այլ կյանքով: Որպես վարդապետ, որպես Այրարատյան թեմի կաթողիկոսական փոխանորդ, որպես Գերագույն Հոգևոր Խորհրդի նախագահող անդամ և որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, իր նամակներով, տեղեկագիրներով, Հայաստանյայց Եկեղեցու բարեկարգության ձեռնարկով, Աստվածաշունչ Մատյանի թարգմանության 1500-ամյակի կապմակերպումով և էլի շատ ու շատ գործերով նա գիտցավ մթության մեջ լույս ըլլալ, իր կապը երբեք չկտրեց ժողովուրդի բոլոր կավակների հետ նույնիսկ արտասահմանում...»:

Այո, ի վերջո, բպումողորմ Տիրոջ կամոք, իր երջանկահիշատակ նախորդների կողքին հավերժորեն հանգչեց նաև Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի նահատակ կավակը՝ Խորեն Ա Մուրադբեկյան չարչարյալ Հայրապետը:

Հավիտենական հիշատակն արդարության օրհնությամբ եղիցի...

Մ. ՎԱՐԴԱՆԵԱՆ